

ՀԱՍՏԱՏՎԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1  
Հայաստանի Հանրապետության  
պետական եկամուտների կոմիտեի  
նախագահի 2020 թվականի  
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
Գործադիր մարմնի կողմից  
27.05.2025 թ.

ՀԱՇՅՎՈՒԹՅՈՒՆ  
«ԿԱՆԱՆՑ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

<b>1. Հասարակական կազմակերպություն՝</b>		
1.1 Լրիվ անվանումը	«ԿԱՆԱՆՑ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»	
1.2 ՀՎՀՀ-ն	00116201	
1.3 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹՎՂԱՄԱՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ 1 ՆՐԲ. 14 ԲՆ.106	
1.4 Պետական գրանցման համարը	211.171.132862	
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2012-08-17	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10123456	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.womensupportcenter.org	
1.8 Էլեկտրոնային փոստը	wsc.armenia@gmail.com	
<b>2 Գործադիր մարմնի ղեկավարի՝</b>		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՄԱՐԻ	ՄԱԹՈՍՅԱՆ	Նախագահ
<b>3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը</b>		
Օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցել ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությանը Անհրաժեշտության դեպքում աջակցել ընտանեկան բռնության գոհ դարձած անձանց		
Նպաստել ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն		
Իրազեկել հասարակությանը ընտանեկան բռնության հիմնախնդրի մասին, ձեռնարկել և իրականացնել այդ ուղղությամբ կանխարգելիչ միջոցառումներ		
Նպաստել ընտանեկան բռնության վերացմանը՝ հասարակության լայն շերտերին, մասնավորապես, հասարակական խոցելի խմբերից կանանց և երեխաներին ապահովել իրավական, քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և այլ բնույթի անհրաժեշտ տեղեկարկությամբ		
Նպաստել ընտանեկան բռնության գոհ դարձած անձանց վերաբերյալ սոցիալական և մշակութային կարծրատիպերի վերացմանը		
Անհրաժեշտության դեպքում աջակցել ընտանեկան բռնության գոհ դարձած անձանց անվճար հոգեբանական, իրավաբանական և բժշկական խորհրդատվություններ տրամադրելու միջոցով		
Աջակցել ընտանեկան բռնության գոհերին՝ տրամադրելով անվճար հեռախոսային խորհրդատվության հնարավորություն		
Անհրաժեշտության դեպքում աջակցել ընտանեկան բռնության գոհերին՝ տրամադրելով անվճար կազմարան (ապաստարան)՝ ժամանակավոր բնակության նպատակով		
Իրականացնել սոցիոլոգիական հետազոտություններ և մոնիտորինգ՝ ընտանեկան բռնության պատճառները, հետևանքները և տարածվածության պատկերը ուսումնասիրելու նպատակով		
Իրականացնել դասընթացներ, կլոր սեղաններ, հանրային քննարկումներ ՀՀ-ում ընտանեկան բռնության հիմնախնդրի վերաբերյալ		
Իրականացնել կրթական ծրագրեր այն խմբերի և կառույցների համար, որոնք աշխատում են ընտանեկան բռնության գոհերի և ռիսկային խմբերի հետ		
Պաշտպանել կանանց բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերի իրավունքները և շահերը ներպետական և միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան		
Ապահովել նորմատիվ իրավական ակտերի հասանելիությունը կանանց բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերին, հոգեբանական, սոցիալ-տնտեսական, իրավական, առողջապահական անհրաժեշտ տեղեկատվության և գիտելիքի բացակայության և այլ տեսակի հիմնախնդիրների հաղթահարման գործընթացում		
Պաշտպանել մոր և մանկան իրավունքները և օրինական շահերը		
Նպաստել սփյուռքի և ՀՀ կանանց բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերի միջև երկխոսությանը, փոխհարաբերությունների խորացմանը և համատեղ գործողությունների իրականացմանը,		
Նպաստել կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացմանը ՀՀ-ում		
Համագործակցել ընտանեկան բռնության հիմնախնդիրներով զբաղվող տեղական և միջազգային բոլոր կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ		
Նպաստել ընտանեկան բռնության ճգնաժամային կենտրոնների ստեղծմանը ՀՀ մարզերում		

Իրականացնել իրագրված ակցիաներ ընտանեկան բռնության հարցերի շուրջ

<b>4 Հասարակական կազմակերպության՝</b>	
4.1 Անդամների թիվը	24
4.2 Կամավորների թիվը	5
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	10

**6. Իրականացված ծրագրեր՝**

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Մարդկանց թրաֆիզինկ և ընտանեկան բռնության կանխարգելում և զոհերին աջակցություն	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Մարդկանց թրաֆիզինկ և ընտանեկան բռնության կանխարգելում և զոհերին աջակցություն	Ավարտված
2	Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարի և կախարգելման կայուն մոտեցումների ձևավորում	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարի և կախարգելման կայուն մոտեցումների ձևավորում	Ավարտված
3	Մենդի աջակցության տրամադրում ընտանեկան բռնության ենթարկված անձանց, ովքեր գտնվում են ապաստարանում	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Մենդի աջակցության տրամադրում ընտանեկան բռնության ենթարկված անձանց, ովքեր գտնվում են ապաստարանում	Ավարտված
4	«ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում»	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	«ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում»	Ընթացքի մեջ
5	«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ»	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ»	Ավարտված
6	Լոտ 1 «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ»	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Լոտ 1 «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ»	Ավարտված
7	Լոտ 2 «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ»	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Լոտ 2 «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ»	Ավարտված
8	Ճանապարհի դեպի ինքնուրունություն. աջակցել ընտանեկան բռնությունից վերապրածների տնտեսական անկախությանը	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Ճանապարհի դեպի ինքնուրունություն. աջակցել ընտանեկան բռնությունից վերապրածների տնտեսական անկախությանը	Ավարտված
9	«Տրավմա և վերականգնում» գրքի թարգմանություն և ընտանեկան բռնության մասին մոդուլների պատրաստում	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	«Տրավմա և վերականգնում» գրքի թարգմանություն և ընտանեկան բռնության մասին մոդուլների պատրաստում	Ավարտված
10	«Տրավմա և վերականգնում» գրքի թարգմանություն և ընտանեկան բռնության մասին մոդուլների պատրաստում	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	«Տրավմա և վերականգնում» գրքի թարգմանություն և ընտանեկան բռնության մասին մոդուլների պատրաստում	Ավարտված
11	Պայքար ընտանեկան բռնություն դեմ Հայաստանում Կովիդ 19 և հետ պատերազմյան շրջանում	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Պայքար ընտանեկան բռնություն դեմ Հայաստանում Կովիդ 19 և հետ պատերազմյան շրջանում	Ավարտված
12	Աջակցություն բռնի տեղահանված անձանց	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Աջակցություն բռնի տեղահանված անձանց	Ավարտված
13	«Հայաստանում ընտանեկան բռնության օրակարգի առաջխաղացում»	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	«Հայաստանում ընտանեկան բռնության օրակարգի առաջխաղացում»	Ավարտված

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ» ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Ավարտված	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ» ենթարկված անձանց աջակցություն	Դրական
2	Լոտ 1 «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Ավարտված	Լոտ 1 «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց	Դրական
3	Լոտ 2 «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ»	Հայաստան, Երևան, Սեպուհի 1	Ավարտված	Լոտ 2 «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ»	Դրական

**8. Տարեկան մուտքեր՝**

8.1 Դրամական միջոցները	150,889,882
8.2 Գույքը	
Ընդամենը	0

**9. Հանրային միջոցներ և ստացման արդյունքներ**

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները	
1	20,909,200	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	
Հ/Հ	9.2 Գույքը		
1			
Ընդամենը	20,909,200		
<b>10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը`</b>			
10.1 Դրամական միջոցները		455,444,046	
10.2 Գույքը			
Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը	
1			
Ընդամենը		455,444,046	
<b>11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը`</b>			
11.1 Դրամական միջոցները		20,909,200	
11.2 Գույքը			
Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը	
1			
Ընդամենը		20,909,200	
<b>12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու`</b>			
Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	
Նշումներ			

Կից ներկայացվում է`

Առդիտորի եզրակացություն` \_\_\_\_\_ 34 \_\_\_\_\_ էջից  
Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար \_\_\_\_\_  
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_  
ստորագրություն, անունը, ազգանուն

**Ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորի եզրակացություն**

**«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ**

**31 դեկտեմբերի 2024թ.**

## Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն .....	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն .....	6
Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն .....	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն .....	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն .....	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ .....	10

## Անկախ աուդիտորի եզրակացություն

«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության հոգաբարձուների խորհրդին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությանը՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀՀՄՍԿ կանոնագրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### Այլ հանգամանք

Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը դրանց վերաբերյալ 2024թ. հունիսի 24-ին դրական կարծիք է արտահայտել:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գրնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:



Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության



անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ԷՖ ԷՍ ՓԻ ԸՂՎԱՅ» ՍՊԸ

Ռուզաննա Բադալյան

Տնօրեն/ առաջադրանքի պատասխանատու



26 մայիսի 2025թ.

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<b>Ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	67,744	60,914
Շտաձգված հարկային ակտիվներ	5	4,604	-
		<u>72,348</u>	<u>60,914</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ		121	121
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	38,900	108,171
Մնացորդներ բանկերում		160,734	266,104
		<u>199,755</u>	<u>374,396</u>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<u><u>272,103</u></u>	<u><u>435,310</u></u>

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<b>Ջուտ ակտիվներ և պարտավորություններ</b>			
<i>Ջուտ ակտիվներ</i>			
Կուտակված արդյունք		(22,411)	(5,880)
		<u>(22,411)</u>	<u>(5,880)</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	67,743	60,914
		<u>67,743</u>	<u>60,914</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8	17,471	21,206
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	208,538	357,027
Շահութահարկի գծով պարտավորություն		762	2,043
		<u>226,771</u>	<u>380,276</u>
<b>Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ</b>		<u>272,103</u>	<u>435,310</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. մայիսի 26-ին:

Մարի Մաթոսյան  
Սախազատ



Բրուս Ընդ Ասատրյան ՍՊԸ

Գլխավոր հաշվապահ՝

Արմենուհի Հովհանյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների թողկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.	
Շնորհից եկամուտ	315,646	280,599
Այլ եկամուտ	9,826	21,674
Աշխատակիցներին հատուցումներ	(58,791)	(63,882)
Մաշվածության ծախսեր	(8,448)	(9,809)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(3,762)	(7,020)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(8,335)	(18,471)
Այլ ծրագրային ծախսեր	(258,528)	(264,611)
Գործառնական գործունեությունից արդյունք	(12,392)	(61,520)
Ֆինանսական եկամուտ	-	3,700
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)	(561)	(3,899)
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը	(12,953)	(61,719)
Շահութահարկի գծով ծախս	3,836	(2,043)
Տարվա արդյունք	(9,117)	(63,762)
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	-
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>	<b>(9,117)</b>	<b>(63,762)</b>

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Ջուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	62,614	62,614
Տարվա արդյունք	(63,762)	(63,762)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(1,148)	(1,148)
Նախորդ ժամանակահատվածներից ճշգրտում	(12,146)	-
Տարվա արդյունք	(9,117)	-
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>(22,411)</b>	<b>(22,411)</b>

Ջուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(9,117)	(63,762)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն	8,448	9,809
Շահութահարկի գծով ծախս	(3,836)	2,043
Շնորհից եկամուտ	(315,646)	(280,599)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	561	3899
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(319,590)	(328,610)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	69,427	91,471
Պաշարների փոփոխություն	-	70
Շնորհների փոփոխություն	148,489	128,681
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(2,797)	(2,105)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(104,471)	(110,493)
Ստացվելիք շնորհ	17,323	84,366
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(87,149)	(26,127)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում/օտարում, զուտ	(16,567)	(1,244)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(16,567)	(1,244)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(103,716)	(27,371)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(1,655)	1,464
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	266,104	292,011
<b>Բանկերում մնացորդներ տարվա վերջում</b>	<b>160,734</b>	<b>266,104</b>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների  
բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և իրավաբանական անձանց հասարակական միավորման տեսակ է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ: Կազմակերպությունը հիմնադրվել է 2012թ. օգոստոսի 17-ին որպես հասարակական կազմակերպություն: Գրանցման համարն է՝ 211.171.132862:

Կազմակերպության կանոնադրական նպատակներն են՝

- նպաստել ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը,
- իրազեկել հասարակությանը ընտանեկան բռնության հիմնախնդրի մասին, ձեռնարկել և իրականացնել այդ ուղղությամբ կանխարգելիչ միջոցառումներ,
- աջակցել ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց՝ տրամադրելով ժամանակավոր կացարան, անվճար հոգեբանական, իրավաբանական և բժշկական խորհրդատվություն,
- իրականացնել հետազոտություններ, կրթական ծրագրեր, հանրային քննարկումներ, դասընթացներ ընտանեկան բռնության հիմնախնդրի վերաբերյալ,
- համագործակցել ընտանեկան բռնության հիմնախնդրով զբաղվող տեղական և միջազգային կառույցների հետ՝ ապահովելով սփյուռքի և ՀՀ կանանց փոխհարաբերությունների խորացմանը:

Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինը մասնակիցների ժողովն է, որն ընտրում է ժողովի նախագահին:

Կազմակերպության մասնակիցների ժողովն ունի չորս անդամ.

- Մարի Մաթոսյան- ՀԿ նախագահ, ժողովի նախագահ
- Սասուն Դերդերյան- Հիմնադիր անդամ
- Քնարիկ Գարանֆիլյան - Անդամ
- Սոնա Այվազյան - Անդամ

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 1 նրբանցք, 14 շենք, բնակարան 106:

### Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների

վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժույթային ակտիվներ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Հիմնադրամի ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

### 2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

## 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

## 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

### **Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար**

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ. որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),
- «Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հեղադարձ վարձակալությամբ գործարքներում» (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),
- «Մարտահարման շրջայի ֆինանսավորման մեխանիզմներ» (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- «Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

### **Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից**

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»
- ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»:

### 3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

#### 3.1 Արտարժույթ

##### *Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը, 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 413.89 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

#### 3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

### 3.3 Ֆինանսական գործիքներ

#### *Ճանաչում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

#### *Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը*

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 10.2-ում:

#### *Ֆինանսական ակտիվների հետագա չափումը*

##### *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

### *Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով*

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Հիմնադրամը հաշվառում է իր ֆինանսական ակտիվները իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, եթե դրանք բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է համապատասխան դրամական հոսքերը «պահել հավաքագրման համար» և վաճառել դրանք և
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Այլ համապարփակ արդյունքում ճանաչված ցանկացած օգուտը կամ վնասը կմարվի ակտիվի ապաճանաչման ժամանակ:

### *Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- Ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

### *Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ*

Հիմնադրամը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Հիմնադրամը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերի:

### *Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը*

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 10.2-ում:

### *Վարկեր և փոխառություններ*

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից

հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

#### *Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

### 3.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

### 3.5 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա կոնկրետ ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Հիմնադրամի կողմից հավաքագրված դրամային միջոցները չեն դիտարկվում որպես Հիմնադրամի եկամուտ այն դեպքերում, երբ տվյալ ծրագրի կամ շնորհի իրականացումը չի կատարվում կամ վերահսկվում Հիմնադրամի կողմից: Նշված գումարները չեն ներառվում Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:

Շնորհը, որը Հիմնադրամին հատկացվել է ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով և որի գծով առկա չեն Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող կոնկրետ պայմաններ (տրամադրվել են Հիմնադրամի ընդհանուր գործառնական, կանոնադրական նպատակներով օգտագործվելու համար), ճանաչվում է այն ժամանակաշրջանի արդյունքում, երբ Հիմնադրամը ստանում է շնորհը:

### 3.6 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

### 3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

### 3.8 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո

տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

#### *Վճարովի բացակայություններ*

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

#### *Պարգևավճարներ*

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

### **3.9 Եկամուտ**

Հիմնադրամի եկամուտները գոյանում են ստացված նվիրատվություններից, բանկային ավանդների դիմաց ստացված տոկոսներից, փոխառություններից ստացված տոկոսներից:

#### *Եկամուտ նվիրատվություններից*

Հիմնադրամի կողմից ստացված նվիրատվությունները, որոնց փոխանցման հետ կապված չեն գործում որևէ պայմաններ, ճանաչվում են որպես եկամուտ, երբ դառնում են ստացման ենթակա:

## 4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենք, շինություն	Մեքենա- սարքավորումներ	Արտադրկան, տնտեսական գույք	Այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	57,167.00	12,573	15,268	14,991	99,999
Ավելացում	-	464	780	-	1,244
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	57,167	13,037	16,048	14,991	101,243
Ավելացում	-	13,506	1,772	-	15,278
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	57,167	26,543	17,820	14,991	116,521
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>					
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	6,277	6,473	7,514	10,256	30,520
Տարվա հաշվարկ	2,858	2,173	2,651	2,127	9,809
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,135	8,646	10,165	12,383	40,329
Տարվա հաշվարկ	2,858	1,645	2,576	1,369	8,448
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,993	10,291	12,741	13,752	48,777
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	48,032	4,391	5,883	2,608	60,914
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,174	16,252	5,079	1,239	67,744

## 5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	-	-
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում	4,604	-
<b>Տարեվերջի մնացորդ</b>	<b>4,604</b>	<b>-</b>

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	-	3,121	3,121
Արձակուրդի պահուստ	-	1,483	1,483
	-	4,604	4,604
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
	-	-	-
<b>Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ</b>	-	4,604	4,604

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	-	-	-
Արձակուրդի պահուստ	-	-	-
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
	-	-	-
<b>Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ</b>	-	-	-

## 6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	4,667
Դեբիտորական պարտքեր նվիրաբերության գծով	30,480	3,635
Տրված կանխավճարներ.	645	98,132
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	1,363	733
Այլ	6,412	1,004
	<u>38,900</u>	<u>108,171</u>

## 7 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	60,914	69,479
Ավելացում	15,278	1,244
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում	(8,449)	(9,809)
<b>Տարեվերջի մնացորդ</b>	<u>67,743</u>	<u>60,914</u>

## 8 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	7,042	6,798
Պետական բյուջեին կրեդիտորական պարտքեր	2,189	1,473
Չօգտագործված արձակուրդային վճարների գծով պահուստ	8,240	12,591
Այլ	-	344
	<u>17,471</u>	<u>21,206</u>

## 9 Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրույթամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրույթամբ
Տարեսկզբի մնացորդ	357,027	219,781
Ավելացում	157,602	403,915
Շնորհի գծով դեբիտորական պարտք	17,323	-
Վերադասակարգում	(15,278)	(1,244)
Վերազնահատում	(937)	5,363
Տարվա ընթացքում ճանաչված եկամուտ	(307,199)	(270,788)
<b>Տարեվերջի մնացորդ</b>	<b>208,538</b>	<b>357,027</b>

## 10 Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնաս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դեբիտորական պարտքեր	156	-
Բանկային մնացորդներ	(1,655)	1,464
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	937	(5,363)
	(561)	(3,899)

## 11 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	(768)	(2,043)
Հետաձգված հարկ	4,604	-
	3,836	(2,043)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ.		2023թ.	
	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ- ների)	(9,117)		(9,117)	
Շահութահարկ՝ 18% (հարկաչափով (2023թ.՝ 18%))	(1,641)	18%	(1,641)	18%
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	(2,195)	24%	(2,195)	24%
Շահութահարկի գծով ծախս	(3,836)		2,043	

## 12 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

### 12.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

#### Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

#### Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս

պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

### *Իրական արժեքի չափումը*

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեն գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը:

### *Մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները*

Ղեկավարությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ վերանայում է մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետների և մնացորդային արժեքների գնահատումները՝ հիմնվելով ակտիվների ակնկալվող օգտակարությունից: Այս գնահատումներում անորոշությունները կապված են տեխնոլոգիական հնության հետ, որը կարող է փոխել որոշակի ծրագրային ապահովման և SS սարքավորումների օգտակարությունը, ինչպես նաև բնապահպանական կանոնակարգերը, որոնք կարող են հանգեցնել աղտոտող ակտիվների ավելի արագ մաշվածությանը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության վերանայումը իրականացվել է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվի դրությամբ հայտնի կլիմայական փոփոխությունը և շրջակա միջավայրի կանոնակարգերը, որոնք Ընկերության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի վրա չեն հայտնաբերել որևէ էական ազդեցություն:

Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

### *Կլիմային առնչվող հարցեր*

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ հաշվի է առնվել կլիմային առնչվող գործոնների պոտենցիալ ազդեցությունը, այդ թվում շրջակա միջավայրին վերաբերող օրենսդրությունը Ընկերության ստանձնած պարտավորությունները, որոնք կարող են ազդել ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արժեքի վրա: Ֆինանսական հաշվետվությունների վրա կլիմայի փոփոխության երկարաժամկետ հետևանքները դժվար են կանխատեսել, և ղեկավարությունից պահանջվում է նշանակալի ենթադրություններ կատարել ու գնահատումներ մշակել: Շատ դեպքերում կիրառվող դատողությունները վերաբերում են ակտիվների փոխհատուցվող գումարին և մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետներին: Այս գնահատումը ներառում է Ընկերության վրա հնարավոր ազդեցությունների լայն շրջանակ՝ պայմանավորված ֆիզիկական և անցումային ռիսկերով: Այս ռիսկերը ներառում

են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Այս ռիսկերը դառնում են կարգավորիչ, քաղաքական և հասարակական մարմինների մանրագնին ուսումնասիրության առարկա՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, սակայն դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ էական անորոշություններ կան: Անցումային ռիսկերի առումով անորոշությունները մնում են կարգավորող և քաղաքական շրջանակների մոտալուտ փոփոխությունների, սպառողների պահանջների և մատակարարման շղթաների փոփոխությունների ազդեցության հետ կապված:

Ընկերությունը կարծում է, որ կլիմային առնչվող հարցերը չեն հանգեցնի ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր հոդվածի հիմքում ընկած գնահատումների և ենթադրությունների էական անորոշության: Չնայած այն փաստին, որ կլիմային առնչվող ռիսկերը ներկայումս կարող են նշանակալի ազդեցություն չունենալ չափման վրա, Ֆոնդը ուշադիր հետևում է համապատասխան փոփոխություններին և զարգացումներին, ինչպիսին է կլիմայի վերաբերյալ նոր օրենսդրությունը:

### 13 Ֆինանսական գործիքներ

#### 13.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.5-ում:

#### 13.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

##### Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	30,480	8,302
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	160,734	266,104
	<u>191,214</u>	<u>274,406</u>

##### Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի	2023թ. դեկտեմբերի
------------	----------------------	----------------------

	31-ի դրությամբ	31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15,282	19,389
	<u>15,282</u>	<u>19,389</u>

## 14 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

### Ֆինանսական ռիսկի գործոններ

#### ա) Շուկայական ռիսկ

##### Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև.

Հոդված

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,444	-	
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9,453	18,550	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	47,162	4,516	-
	<u>47,162</u>	<u>4,516</u>	
Զուտ արդյունք	<u>(31,265)</u>	<u>14,034</u>	<u>-</u>

Հողված

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	168	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	20,967	13,572	5,141
	20,967	13,740	5,141
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	88583	13,572	-
	88,583	13,572	-
Զուտ արդյունք	(67,616)	168	5,141

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	(3,127)	(6,762)	1,403	17

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

*բ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Պարտքերի ժամկետները տատանվում են 30-ից 90 օրերի միջև: Հաճախորդների հետ պարտքերի վերաբերյալ պայմանների համաձայնեցումը պետք է անցնի հաստատման գործընթաց, որը ենթադրում է վարկանիշային քարտի կիրառում]: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար կրեդիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում: Բացի այդ Ընկերությունը գրավ չի պահանջում նաև այլ ֆինանսական ակտիվների համար (օրինակ. ածանցյալ ակտիվներ, բանկերում պահվող դրամական միջոցներ և դրանց համարժեքներ):

*գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Մինչև 6 ամիս	7,042	6,798
6 ամսից մինչև 1 տարի	2,189	1,473
1-5 տարի	8,240	12,591
	<u>17,471</u>	<u>20,862</u>

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

## 15 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

## 16 Պարտավորվածություններ

### 16.1 Իրավական պարտավորվածություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա են Ընկերության հանդեպ հարուցված տարբեր դատական հայցեր, որոնք գտնվում են ընթացքի մեջ և դրանց վերջնական արդյունքը պարզ կդառնա 2025թ.-ին: Ղեկավարությունը չի կարող հստակ հաշվարկել դատական գործերի արդյունքում հնարավոր պարտավորվածության գումարը՝ ելնելով դատական գործերի բնույթից, առանձնահատկություններից:

## 17 Պայմանականություններ

### 17.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### 17.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը

հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

### 17.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

## 18 Ֆինանսական գործիքներ

### 18.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

### 18.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

#### Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	30,480	8,302
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	160,734	266,104
	<u>191,214</u>	<u>274,406</u>

### Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15,282	19,389
	<u>15,282</u>	<u>19,389</u>

## 19 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

### Ֆինանսական ռիսկի գործոններ

#### ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

#### բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, ավանդները և ստացվելիք փոխառություններից:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

#### գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ:

## 20 Պայմանականություններ

### 20.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն

կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

## 20.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

## 21 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հիմնական ղեկավար անձնակազմը:

### 21.1 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	13,117	12,038